ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ№ ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-26/100

«30» Հունիսի 2026թ.

Ք. Երևան

Շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Պատվիրատու»**, մի կողմից, և **«Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ-ն**, ի դեմս Տարոն Վարդանյան Արտուրի, այսուհետ՝ **«Կատարող»**, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով «Կատարող»-ը պարտավորվում է «Պատվիրատու»-ի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ «Պատվիրատու»-ն պարտավորվում է ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2. «Կատարող»-ը պարտավորվում է կատարել **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Բաթումի 3** հասցեում գտնվող անշարժ գույքի չափագրման աշխատանքները:

1.3. Աշխատանքները ներառում են չափագրման ծառայության մատուցման համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր գործողությունները, տեղազննումը, չափագրումը, չափագրման արդյունքների ձևակերպումը և համապատասխան փաստաթղթերի կազմումը՝ «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված փաստաթղթերի հիման վրա:

1.4. Աշխատանքների կատարման սկիզբը համարվում է պայմանագրի կնքման օրը, իսկ ավարտը՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.5. Ծառայությունները համարվում են մատուցված «Պատվիրատու»-ի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

1.6. Չափագրման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և անշարժ գույքի չափագրման ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված փաստաթղթերը և ելակետային տվյալները:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. «Կատարող»-ը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով:

2.1.2. Պատշաճ և օբյեկտիվ կատարել անշարժ գույքի չափագրման աշխատանքները:

2.1.3. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով՝ սույն պայմանագրի 1.4 կետով սահմանված ժամկետում կամ, «Պատվիրատու»-ի համաձայնությամբ, ավելի վաղ:

2.1.4. «Պատվիրատու»-ի պահանջով 10 (տաս) օրվա ընթացքում անհատույց վերացնել իր մեղքով թույլ տրված բոլոր թերությունները:

2.2. «Պատվիրատու»-ն պարտավոր է՝

Ժամանակին «Կատարող»-ին տրամադրել չափագրման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերը, ապահովել անշարժ գույքի տեղազննումը և, անհրաժեշտության դեպքում, տրամադրել կամ ապահովել չափագրման համար անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերը:

2.3.

«Պատվիրատու»-ն պարտավորվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարը վճարել ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման օրվանից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

2.4. «Պատվիրատու»-ն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել «Կատարող»-ի կողմից աշխատանքների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.5.

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և չափագրման աշխատանքներին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է **150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ**:

Վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ «Կատարող»-ի բանկային հաշվեհամարին, հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման կամ վճարման ժամկետի խախտման դեպքում խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի **0,1 տոկոսի չափով**, իսկ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ **0,05 տոկոսի չափով տույժ**:

4.2. Տուգանքի կամ տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից և թույլ տրված խախտումները վերացնելու պարտականությունից:

5. Անհաղթահարելի ուժ (Ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի հանգամանքներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, կապի միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների իրավական ակտերը և այլ հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում կատարվող ցանկացած փոփոխություն կամ լրացում ուժ ունի միայն այն դեպքում, եթե այն կատարվել է գրավոր և ստորագրվել է կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Շրջակա միջավայրի նախարարության	«Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ
Էկոպարեկային ծառայություն	
	ք. Վանաձոր, Զուխաջյան թղմ. 29/11
ք.Երևան, Ա. Արմենակյան 129	ՀՎՀՀ - 67088635
ՖՆգործառնական վարչություն	ՀՀ - 220053075978000
ՀՀ 900011023265	
ՀՎՀՀ 00476409	«Ակբա Բանկ» ԲԲԸ Լոռի մասնաճյուղ
Էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար	«Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ
Լ. Ալեքսանյան	
Կ.Տ	Կ.Տ